

ՏԱՐԷԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ի ԼԱԽԱՑ ԵՒ ՕԼԱԽԱՑ ԵՐԿՐԻ



Ս. Աստուածածին մայր եկեղեցի Հայոց ի Կառնեկից

ՍԶԳԻՍ գուցէ ոչ պակաս քան զքնիկ հայրենեացն՝ յօտար երկիր գաղթականացն պատմութիւնն այլ կըրնայ շատ հետաքննական ըլլալ, եթէ և կարելի ըլլար գտնել, հաւաքել և յայտնել. դործ երկար և դժուար՝ մէկ անձին համար. այլ դիւրին, եթէ գիտնականք գաղթականութեան զլիաւոր կենդրոնից՝ ձեռք զարնեն իրենց երկրորդ հայրենեաց ծագումը լուսաբանել, զորս յետոյ կըրնայ մէկ անձ մ'այլ հաւմահաւաքել: Այսպիսի գործոյ արդէն փորձեր եղած են, թէ ազգային օրագրաց մէջ և թէ առանձին զրբոյկներով. որպէս երբեմն և մեր օրագրիս մէջ, և վերջի տարիներս Վիեննայի Միթարեանց Հանդիսի մէջ, յատկաբար Հունգարիոյ Հայոց վրայօք: — Յետոցս զուգակից աւելի կամ նուազ պարագայիք՝ երկու մեծ կենդրոնք գաղթականութեան Հայոց եղած են և կան, Ղենաց և Վշահաց, ռամկօրէն յիշխաց և յիշխաց. առաջինն է ի Լեհաստան գաղթեալ և բնակեալ Հայոց, քան զամենեսին նշանաւոր, որ ի կիսոյ ԺԻ դարու մինչեւ ցայժմ անընդհատ եպիսկոպոսական և արքեպիսկոպոսական աթոռ ունի, պատուեալ և հռչակեալ յԱւստրիական կայսերութեան: Երկրորդն՝ ի Դանուբեան նահանգս, ի Վալաքիա և Մոլտաւիա (Ուլաշ-Պուդաւան), որ թէ և յատուկ եկեղեցական աթոռ չէ ունեցեր, այլ երբեմն առանձին կողմանց և քաղաքաց եպիսկոպոսներ, երբեմն Լեհահայոց աթոռոյն հպատակ. հիմայ այդ երկու նահանգաց միանալով Թագաւորութեամբ Ռու-

մանկոյ, ինչպէս և՛ Սերպաց յատուկ տէրութեամբ, տեղացի Հայոց վիճակն այլ քաղաքական փոփոխութիւն և ինքնութիւն մի առաւ. և յառաջագոյն սկսան իրենց առաջին և միջին դադթական հարց և նախնեաց անցուկացը հետազոտել, և թէ տեղւոյն լեզուաւ՝ թէ հայերէն ժանօթութիւններ ընծայել:

Ռոմանիոյ մէջ երկու պատուաւոր գիտնականք, թէ և ոչ համակարծիք, մէկն բնիկ երկրին (և ըստ մեզ՝ օտարազգի) Պր. Հրժտե՛ն Ռոմանական աւերակներ ընկերակից, միւսն՝ մերազգի Պր. Գրիգոր Պրյորցեան, տէրութեան բարձրագոյն և վճռարեկ ատենին դատաւոր, ԺՁ դարու մէջ՝ այն կողմերու Հայոց դիպուածներու վրայօք՝ առման լեզուաւ յօդուածներ հրատարակեցին, նա և այս տարի, որոց մասն այլ թարգմանուած է հայերէն ի վերոյիշեալ Հանդիսի թէ՛ այդ երկրին և թէ՛ մանաւանդ լեհաստանի Հայոց վրայօք՝ ասկէ՝ 65 տարի առաջ կարեւոր տեղեկութիւններ և յիշատակարաններ հրատարակած էր տպագրութեամբ (ի վստահեմ, 1830) բազմադրիւն Հ. Միւնստի. մեր Բժշկեան, իր Հանապարհորդութիւն ի Ղինաստան գրոց մէջ, որ և նոխագոյն և շատ պատուական աղբիւր է այդ կողմանց նկատմամբ: Այդ գիրքը կարդացողն կ'իմանայ, որ արդարեւ լեհահայոց դադթականն գերագանցեր է քան զայլ կողմանց, ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական կարգօք, գրաւոր օրինօք և իշխանօք, դատաւորօք և դատաւորանարանաւ, գրեթէ զուգահաւասար բնիկ ժողովրդեան երկրին, դուցէ՛ և առաւելեալ՝ նախարար վաճառականութեամբ, և ոչ յետեւալ ի դիտութիւնս: Ասոնց վրայօք և յատկապէս լեհագրիկի Հայոց՝ օտարք այլ գրած են, որոց մին Պիշլով գերմաներէն, նախ (1862) անոնց օրինաց (ըստ Միխիթ. Գաշի. Die alte Recht der Armenier in Lemberg), յետոյ (1864) անոնց պատմութեան (Urkunde der Armenier in Lemberg). Սոյն իսկ այս օրերս, յետ 600 բազմադէպ տարիներու, գիտնական բնիկք երկրին սկսած են հրատարակել՝ իրենց յատուկին հետ՝ նա և իրենց հիւրական Հայոց ձեռագործ յիշատակարանները, լուսագրեւով և լուսաբանեւով, ինչպիսիք են եկեղեցիք, ապարանք, աղբերք, դամբանք, պատկերք, և այլն. որք և անձայն վկայք են Հայոց եկեղեցական և ուսումնական զարգացման: — Առաջնոյն նկատմամբ, ժանօթագոյն և հըռլակաւորն է Նիկողայոս (Նիկոլ) արքեպիսկոպոսի դէպքն, կրօնական յեղափոխութեամբ և միաբանութեամբ Հռովմէական եկեղեցւոյ, ըստ ժանօթ պատմագրութեան Առաքել վարդապետի՝ յ'Ժէ դարու, և ի մօտ տարիներս՝ գիտնական պաշտօնէի Ռուսաց տէրութեան Պր. Կարապետի Եղեանց (Եղոթ): Նկատմամբ երկրորդին՝ հարուստ վկայական է իրենց եկեղեցականաց մէկուն (Տէր Սահովկ Պարոնչ) լեհաբէն լեզուաւ գրած՝ Հայոց նշանաւոր անձանց կենսագրութիւնն, տպագրեալ ի լեհագրիկ յամի 1856:

Թէ և Նիկոլեան յեղափոխութենէն ետեւ եղած է լեհահայոց աւելի մը տաւորական բարգաւաճանքն, բայց իրենց հնագոյն եպիսկոպոսական գահն և դատաստանարանք՝ տան գուշակել և հնագոյն զարգացումն, որոյ կըրնային վկայել և 1000 կտորէ՝ աւելի հայերէն ձեռագիր մատեանք, շատն ի Սոսոյ բերուած, որք այդ կրօնական երկրիմի դիպուածին շփոթութեանց ատենն ցրուեր և կորսուեր են. ո՞ր գիտէ, թէ և սրբան յատուկ յիշատակարանք և պատմագրութիւնք: — Այս տեսակ գրութեանց մին համարիմք հիմալ մեր քով գտուած Տարեգիրքն Կամենեցի, որոյ այս անունը կու տամք, որովհետեւ գրոց սկիզբն պակսի. ԺՁ-ԺԵ դարուց դործ է, և հիմակուան գրից

մէջ երեսաց թուակարգն 3է կու սկսի. ըսել է թէ առաջին թուղթն կորած է. բայց ոչ այն միայն՝ այլ և շատ թուղթեր: Վասն զի ամենէն մեծ դիւ պուածներէն մէկը, յամի 1551 Մոլտաւիոյ Հայոց հալածանքը, երկու տողով միայն յիշելով ժամանակագրողն, կ'ըսէ, թէ այդ բանդ գրուած «կայ ի գրիս յառաջագոյն». եւս և, «որպէս և գրեալ կայ ի գրին այս առաջագոյն»: Ուրեմն անտարակոյս կորսուած է Տարեգրոցս առաջին մասն, որոյ թերեւս վերնագիր կ'ընայ ըլլալ այս երկտող բանս, որ Բարիզու մեծ գրատան հայերէն ձեռագրաց մէկուն մէջ գրուած է առանձինն. «Յիշելիք կանուխ ժամանակաց, ապագայիցս ձեռագրութեամբ, յաղագս գաւ» առապետաց, այդինքն Պարոնաց Մոլտաւու երկրիս». նոյն բանս լատիւ նարէն այլ թարգմանուած գրուած է: Այս գրոցս (յորմէ շատ բան քաղած է մեր վերոյիշեալ Հայրն Բժշկեան), Հիմայ միացեալ մասին տարեգրութիւնն կանոնաւոր կարգով կու սկսի ի 1560 տարիէն, բայց ընդհատօրէն՝ անկէ գար մի և աւելի առաջ՝ ինչուան 1430էն, կարճ կարճ, և անշուշտ հնագոյն զբուռածներէ հաւաքելով, և ոչ միշտ ուղիղ ժամանակի կարգով, այլ յետ և առաջ ցրուած. զորս մեկն տեղափոխելով շարակարգեմք ըստ յաջորդութեան տարեթուոց, Գրոցս մասին նորագոյն օրինակ մ'այլ կայ ի գրատան Բարիզու, յորում քանի մի հնագոյն բայց ոչ նշանաւոր ազգային յիշատակք այլ կան, որ չեն վերաբերի մեր գաղթականաց: Տարեգիրքս, զոր հրատարակեմք ի խնդրոյ վերոյիշեալ ազգասէր գիտնականի Պր. Գրիգորի, թէ և հասարակօրէն Լեհահայոց յիշատակաց է, քիչ մ'այլ Մոլտաւեանց, այլ յատկապէս Կամենից քաղաքի, որոյ վրայդ կարեւոր տեղեկութիւն կ'ըրնան գտնել փափագողք՝ ի վերոյիշեալ Ճանապարհորդութեան Բժշկեան Հօր, և առաւել եւս զուարճալի՝ թէ քաղքին և թէ իր պաշտպան՝ Հայոց եկեղեցոյն մէջ պատուեալ հրաշագործ Տիրամօր պատկերին, ի նորատիպ (այս տարի, 1895) Ճանապարհորդութեան + Հ. Փերովսէի Քուչնէրեան:

Տարեգրոցս հեղինակք են հայ աւագերէցքն. նախ Տէր Յովնանեան, 1560էն մինչեւ ի 1610, յորում վախճաններ է, 84 տարուան, 56 տարի քահանայութիւն ընելով՝ որոյ 29 տարին այլ աւագերիցութիւն, ինչպէս ինքնին յիշէ տեղ մի (յամի 1597). գրուածն ցուցնէ որ ոչ միայն լեզուին բաւական հըմուտ է, այլ և նախնեաց գրուածոց և ազգին պատմութեան: Կենաց ետքի տարիներուն (1605-10) յիշատակներն՝ երեւի գրած իր որդին և յաջորդն՝ Տէր Գրիգոր աւագերէց: Բայց սա յետ մահուան հօրն՝ (մեզ ոչ հաճելի) թաթար կամ թանձր թուրք լեզուաւ չարունակէ զտարեգիրն՝ մինչեւ ի 1616, նոյնպէս այլ իր որդիքն Տէր Օքսենու և Տէր Յակովբ (+ 1629) մինչեւ ի 1624: Այսպէս ըրած են այդ Լեհահայքդ իրենց դատաստանական գրուածոց եւս, որոց 30 մեծ հատորէն աւելի՝ Հիմայ պահուին Քիւեի դիւանաց մէջ. առաջին քանի մի տարիներուն գործերն՝ հայերէն, վերջի մեծ և շատ մեծ մասն՝ թաթարերէն գրած (1):

Լեզուին օտարութեանն և հասարակաց անհասկանալի ըլլալուն պատճառաւ՝ ցաւելով ստիպուիմք թողուլ ի հրատարակութենէ՝ վերջին մասը, թաթարերէնը, որ և մեծագոյն մասն է, 86 երես գրոցն, մինչ հայերէնն՝ 74

1 Տէր Յովնանեան յիշէ իր մէկ քահանայ որդին այլ Տէր Միգայէլ (+ 1592), որքս որդին այլ Յովնոր աղբաւաղ (+ 1609). մէկ ուշաբերիկ որդի (Տէր Յովնանու) այլ յիշուի՝ Վարդերես անուն: Այս զբէս դուստր յիշատակուած է Տէր Գրիգոր ի Ճանապարհորդ. Լեհաստանի (եր. 158):

միայն է. ժամանակին թողով ուրիշ խորհուրդ կամ հնարք մի տալու. միայն թերեւս քանի մի դերիմաց յիշատակ՝ կամ ըստ գրուածին կամ թարգմանօրէն և քաղելով առնուիմ ըստ տարէթուոց, աստղանշաւ ի սկզբանն, որ իմացուի լեզուին կամ գրողին տարբերութիւնն:

Լեհաց և Վլախաց Հայ գաղթականք ինչպէս և շատ ուրիշ կողմանց, ըստ աւանդութեան, կու սկսին Անի քաղաքին և Քաղարատունեաց նուաճուելէն վերջը. իրենց գլխաւոր բնակատեղին կ'ըլլայ Լեմպէրկ, որ և Լեոպօլիս, ըստ Հայոց Լով կամ Իլլով, որոյ եկեղեցւոյ (հրաշահչակ Տիրամօր պատկերաւ) առաջին փայտեղէն շինութիւնն եղած կ'ըսուի յամի 1182, իսկ երկրորդն և քարաշէնն ի 1363. այս թուականէս և յետոյ՝ մնան գրաւոր յիշատակարանք (տես ի գիրս Ճանապարհորդութեան Հ. Մինասայ). որոց կարգէն և անկուրուստ մնացեալ հնագոյնն՝ է Մեսրովպ կաթողիկոսի վաւերական կոնդակն՝ յամի 1364, սովորական ձեւով գլխնի ծրարեալ՝ յիրար կպած երկար մագաղաթով. և ուղղած է գիրն առ գաղթականն՝ Լով, Լուցկա և Վլատիմիր քաղաքաց և անոնց վիճակաց, իրենց եպիսկոպոս խաւրելով զԳրիգոր ոմն, որմէ առջինները, կ'ըսէ, ինքնագլուխք էին և ոչ օրինաւորք: Տասն տարի վերջը իր յաջորդն Կոստանդին կաթողիկոս՝ զնոյն բան և զնոյն Գրիգոր հաստատեալ է՝ կարճ գրուածով և ստորագրութեամբ՝ Մեսրովպայ կոնդակին ներքեւ, զոր եպիսկոպոսն բերեալ էր ի Սիս՝ վերահաստատութեան համար. իբր տասն տարի այլ ետեւ (1383) յաջորդն Կոստանդին թէոգորոս՝ ձեռնարդէ և խաւրէ նոր եպիսկոպոս, զՏէր Յովնաննէս որդի Պր. Նասրադին. ուրիշ կոնդակի մէջ (1389) փոխանակ Վլատիմիրի յիշէ (ի թեմս կամ ի վիճակս եպիսկոպոսին) զՄանգիրման (համարիմք Ագքիրման), Լով ու Լուցկայի հետ նա և զՍերաբ, Չելով (Սուչաւա), Կամենից, Վլախաց երկիրն, Պըտին (Պուտա-Քէշի) և Ընկիոսայոյ ? — Թէոգոր այս երկրորդ և նշաւաւոր կոնդակով վերահաստատէ զՅովհաննէս և մերժէ զԳրիգոր, զոր թէպէտ և իր նախորդներէն այլ ընդունուած զրէ, բայց իր առաջին կոնդակին մէջ յիշուած չըլլալով, և թաթարալեզու տարէգրի մէջ այլ յատկաբար Ուլուս Գրիգոր մի (մեծ կամ առաջին) յիշուելով, տարակուսիմք, մի թէ երկու Գրիգոր եղած են: Թողով այս քննութիւնը, իբրեւ հետաքննական և հին դիպուած մի մեր գաղթականաց, մասամբ նման Նիկոլեանին, (թէ և ոչ պատուաւոր, այլ ըստ ներելոյ եկեղեցական պատմութեան՝ որոյ հարկ է երբեմն և զանհաճոյն յիշել և դատել զչարն և զբարին), հրատարակեմք զայս կոնդակ թէոգորի՝ յառաջ քան զՏարէգիրս, և քան զայն այլ առաջ՝ զԿոնդակն Մեսրովպայ, իբրեւ հնագոյն հաւաստագիր մի այս մեծ գաղթականութեան, միանգամայն և նախընթաց լծորդ թէոգորոսի կոնդակին. երկուքն այլ իրենց ուղիղ կամ սխալ տառագրութեամբ:

(Շարայարեչի)